

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ԱՐԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաղաթեյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (*Պ-118-23.08.2017-ՊԻՄԻ-011/0*) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2017 թվականի սեպտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից գեկուցող) նշանակելու մասին» N 1087-Ա որոշումը:

Հարգանքով՝

ՎԱՀԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆ-
ՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-118-23.08.2017-ՊԻՄԻ-011/0)
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-118-23.08.2017-ՊԻՄԻ-011/0) լրամշակել՝ նկատի ունենալով այն, որ մեղադրյալի հարցաքննության պարտադիր տեսաձայնագրումը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսդրությամբ ներդնելու համար անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել նաև հետևյալ հարցերը՝

1. Այն չի կարող ինպերատիվ կիրառվել և դրա իրականացման համար անհրաժեշտ է ստանալ մեղադրյալի համաձայնությունը: Մեղադրյալի հարցաքննության պարտադիր տեսաձայնագրումը կարող է գործնականում բարդություններ առաջացնել և բացասաբար անդրադառնալ քննության արդյունավետության վրա: Գործնականում լինում են դեպքեր, երբ անձը, հոգեբանական բարդությամբ ունենալով, կաշկանդվում է տեսաձայնագրման պայմաններում ցուցմունքներ տալուց:

2. Տեսաձայնագրման դեպքում անհրաժեշտ է կարգավորել գործողության ընթացքի տեսանելիությունը (ընդգրկվածությունը, լուսավորությունը և այլն) և ամբողջականությունը, տեսաձայնագրությունն իրականացնելու տեխնիկական բնութագիրը և սարքավորումներին ներկայացվող տեխնիկական պահանջները:

3. Հարկ է անդրադառնալ նաև տեսաձայնագրման ժամանակ տեխնիկական ընդհատումների դեպքում քննչական գործողության ընթացքի լուծմանը (արդյո՞ք այն դադարեցվում է, շարունակվում է, հայտարարվում է ընդմիջում, հնարավոր է կիրառել այլ տեխնիկական միջոցներ կամ սարքեր):

4. Տեսաձայնագրման դեպքում հարցաքննության թղթային արձանագրումը պահպանվելու՞ է, թե՛ ոչ: Թղթային արձանագրման պահպանման դեպքում անհրաժեշտ է ամրագրել հարցաքննության տեսաձայնագրության՝ որպես ապացույցի ինքնուրույն տեսակի իրավական կարգավիճակն ու դրա հարաբերակցությունը հարցաքննության թղթային արձանագրության հետ: Այսինքն, անհրաժեշտ է օրենսդրական կարգավորման ենթարկել այն հարցը, թե հարցաքննության տեսաձայնագրությունն արդյո՞ք ունի հարցաքննության թղթային արձանագրության հետ հավասար իրավական կարգավիճակ:

5. Օրենքի նախագիծը չի պարունակում անցումային դրույթներ այն մասին, թե դրանով նախատեսված կարգավորումները երբ են ուժի մեջ մտնելու: Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով մեղադրյալի հարցաքննության տեսաձայնագրման պարտադիր պահանջ նախատեսելու համար անհրաժեշտ է նախաքննական մարմիններին ապահովել անհրաժեշտ տեսաձայնագրող և այլ սարքավորումներով: Այս առումով պետք է նկատի ունենալ այն, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նման կարգավորման նախատեսումը կառաջացնի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից լրացուցիչ միջոցների հատկացման անհրաժեշտություն: Հետևաբար, անհրաժեշտ է նախ ունենալ ներդրվող ինստիտուտի հստակ տեսլական, դրա պայմաններում կատարել սարքավորումների ձեռքբերման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հաշվարկ, ապա գնման գործընթացի կազմակերպում և տեխնիկական միջոցների տրամադրում նախաքննական մարմիններին:

6. Պետք է նաև նախատեսել բավարար ժամանակ, որպեսզի կազմակերպվեն վերապատրաստումներ՝ տեսաձայնագրող սարքերի միջոցով հարցաքննություն անցկացնելու հմտություններ ձևավորելու համար:

Պ-118-23.08.2017-ՊԻՄԻ-011/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգրքի 212-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ. «Մեղադրյալի հարցաքննությունը տեսաձայնագրվում է»:

Հոդված 2. Օրենսգրքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերությունը լրացնել նոր նախադասությամբ. «Սույն օրենսգրքի 212-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքում տեսաձայնագրություն կատարելը պարտադիր է»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող երեսուներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՄ

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման

Նախագծի ընդունումը պայմանավորված է նախաքննության ընթացքում՝ հարցաքննության ժամանակ, տեսաձայնագրում կատարելու միջոցով բացառելու կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ խոշտանգումը եւ վատ վերաբերմունքը: Գործող քրեական դատավարության օրենսգրքի համաձայն, կասկածյալի կամ մեղադրյալի հարցաքննությունները տեսագրվում են ըստ անհրաժեշտության: Այն դեպքերում, երբ հարցաքննությունը իրականացվում է առանց տեսաձայնագրման, բարդ է ապացուցել կամ հերքել հարցաքննության ընթացքում խոշտանգում եղել է թե՛ ոչ: Եթե մեղադրյալի հարցաքննությունները քրեական դատավարության օրենսգրքի համաձայն տեսաձայնագրվեն, ապա հնարավոր կլինի նախ պարզել խոստովանական ցուցմունքը տրվել է խոշտանգման, նվաստացման ենթարկման արդյունքում, թե՛ ինքնակամ: Հարցաքննության տեսաձայնագրմամբ նաեւ հնարավոր կլինի պարզել հարցաքննվողի դեմքի կամ մարմնի տեսանելի մասերի վրա առկա է արդյոք խոշտանգման հետքեր, կամ՝ կապացուցվի հակառակը, որը կբխի օրինականության սկզբունքից: Անձը իրավունքի չարաշահում կարող է կատարել եւ սուտ տեղեկություններ հայտնել իրավապահ մարմիններին, եւ հարցաքննության տեսաձայնագրման հանգամանքը հաշվի առնելով զերծ կպահի նման հանցագործություն իրականացնելուց: Նախագծով առաջարկվող նորմի ընդունմամբ կասկածյալի հարցաքննությունը նույնպես կտեսաձայնագրվի, քանի որ քրեական դատավարության օրենսգրքի 211-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն. «Կասկածյալին հարցաքննելիս մնացած հարցերը կարգավորվում են մեղադրյալի հարցաքննության համար՝ սույն օրենսգրքով սահմանված կանոններով»: Բազմաթիվ են դեպքերը, երբ դատաքննության ընթացքում բազմիցս ականատես ենք լինում մեղադրյալի կողմից նախաքննության ընթացքում հարցաքննության ժամանակ տրված ցուցմունքների եւ դատարանում տրված ցուցմունքների միջեւ հակասություններին, ինչը շատ դեպքերում տարաբնույթ մեկնաբանությունների առիթ է հանդիսանում հանրության շրջանում եւ առաջացնում է անվստահություն արդարադատության համակարգի նկատմամբ: Ուստի, մեղադրյալի, կասկածյալի հարցաքննությունների տեսաձայնագրման նորմի կիրարկման պահանջը խիստ անհրաժեշտ է՝ արդար դատաքննություն իրականացնելու համար եւ այն ուղղակի կնպաստի քրեական դատավարության օրենսգրքի մի շարք նորմերի պահանջների արդյունավետ կատարմանը եւ կամրապնդի խոշտանգումների բացարձակ արգելքը, որը սահմանում է մարդու իրավունքների եվրոպական կոնվեցիան: